ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2025 թվականի
Փետրվարիրի 05-ին կայացած գիտխորհրդի հ. 5 նիստի

Օրակարգում՝

1. 2024-2025 ուստարվա առաջին կիսամյակի քննությունների արդյունքների ամփոփում /զեկ.՝ Ա.Բաղդասարյան, Ն.Ալավերդյան/։
2. Հեռակա ուսուցման «Կիրառական հոգեբանություն» մագիստրոսական ծրագրի թեզերի պաշտպանության արդյունքների մասին /զեկ.՝ Ա.Բաղդասարյան/։
3. Առկա և հեռակա ուսուցման բակալավրի 4-րդ և 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների թեմաների հաստատում /զեկ.՝ Վ.Պապոյան/։
4. 2022-2024թթ. փետրվար և մարտ ամիսներին հրամանագրված հայցորդների տարեկան ատեստավորում /զեկ.՝ ամբիոնի վարիչներ/։
5. Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի՝ Սպորտի և հոգեբանության ամբիոնի հայցորդ Ա.Վ.Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը /զեկ.՝ Հ.Ավանեսյան/։
6. Հ.գ.դ., պրոֆեսոր Արսեն Լոքյանի և Սվետլանա Բաղդասարյանի կողմից ներկայացված «Զինծառայողների մարտական ակտիվությունը պայմանավորող հոգեբանական գործոնները ժամանակակից պատերազմների համատեքստում» մենագրության տպագրության երաշխավորման հարցը։
7. Քնարիկ Առաքելյանի և Ալինա Գալստյանի կողմից ներկայացված «Զոհային վարքի հակվածության ուսումնասիրության առանձնահատկությունները դեռահասության տարիքում» մեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորման հարցը։
8. «Ընդհանուր հոգեբանություն» ոչ մասնագետների համար հեռավար ձևաչափով պատրաստված դասընթացի մասին /զեկ.՝ Ի.Ղազարյան, Ս.Շահվերդյան, Ն.Խաչատրյան/։
9. Կարգապահական հարցերը ֆակուլտետում։
10. Ընթացիկ հարցեր։

1. Ա. Բաղդասարյանը ներկայացրեց 2024-2025 ուստարվա առաջին կիսամյակի քննությունների արդյունքները։ 700 ուսանողներից 146-ը ստացել են անբավարար գնահատական։ Նշված քանակում եղել են նաև պետպատվերով սովորողներ և 10 ուսանող մագիստրատուրայից։
Ն .Ալավերդյանը ևս մեկ անգամ ևս հիշեցրեց reg.ysu և e-learning համակարգում լրացման ժամկետները՝ reg.ysu - մինչև փետրվարի 11, իսկ e-learning համակարգում՝ փետրվարի 17-ը։

2. Հեռակա ուսուցման «Կիրառական հոգեբանություն» մագիստրոսական ծրագրի թեզերի պաշտպանության արդյունքները ներկայացվեցին Ա.Բաղդասարյանի կողմից։ Ուսանողներից 1 հոգի չի պաշտպանել ժամանակին աշխատանքը չներկայացնելու պատճառով։ 9-ից 4-ը արժանի են կարմիր դիպլոմի։

3. Առկա և հեռակա ուսուցման բակալավրի 4-րդ և 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների թեմաների հաստատում։ Վ. Պապոյանը ներկայացրեց թեմաների և ուսանողների ցանկը։ Թեմաները քննարկվել և հաստատվել են ամբիոններում։
Ա.Բաղդասարյանը առաջարկեց ՈՒԳԸ-ին կազմակերպել հոդվածների տպագրություն պաշտպանված լավագույն հետազոտական աշխատանքների համար։

4. 2022-2024թթ. փետրվար և մարտ ամիսներին հրամանագրված հայցորդների տարեկան ատեստավորում /զեկ.՝ ամբիոնի վարիչներ/։
Հայցորդներից եղել են մարդիկ, որոնք դուրս են մնացել ատեստավորումից համապատասխան աշխատանքներ չկատարելու համար։

5.Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի՝ Սպորտի և հոգեբանության ամբիոնի հայցորդ Ա.Վ.Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը։ Հարցի կապակցությամբ զեկուցեց ՝ Հ.Ավանեսյանը։ Թեմայի վերնագրի հետ կատարվել է ճշգրտում և հաստատվել է հետևյալ վերնագրով՝ «Մարզիկի մրցակցային

սթրեսակայունության ձևավորման առանձնահատկությունները կարատե-դո մարզաձևում»

6. Տպագրության երաշխավորվեց Հ.գ.դ., պրոֆեսոր Արսեն Լոքյանի և Սվետլանա Բաղդասարյանի կողմից ներկայացված «Զինծառայողների մարտական ակտիվությունը պայմանավորող հոգեբանական գործոնները ժամանակակից պատերազմների համատեքստում» մենագրությունը:

7. Տպագրության երաշխավորվեց Քնարիկ Առաքելյանի և Ալինա Գալստյանի կողմից ներկայացված «Զոհային վարքի հակվածության ուսումնասիրության առանձնահատկությունները դեռահասության տարիքում» մեթոդական ձեռնարկը: Սակայն առաջարկվեց վերանայել Զոհային վարք բառակապակցությունը

8. «Ընդհանուր հոգեբանություն» ոչ մասնագետների համար հեռավար ձևաչափով պատրաստված դասընթացի մասին զեկուցեց՝ Ի.Ղազարյանը: Տվյալ կուրսը մշակվել և ներկայացվել է փորձագիտական կարծիքի: Արհեստական բանականության ներգործությամբ մշակվել են դասախոսություններ ըստ թեմաների և հարցադրումներ:

9. Ա.Բաղդասարյանը կրկին անդրադարձավ ֆակուլտետում կարգապահական հարցերին:

10. Ընթացիկ հարցեր.

- Քննարկվեցին ուսանողների թեկնածությունները անվանական կրթաթոշակի մասնակցության համար: Առաջարկվեցին փիլիսոփայության ամբիոնից Արկադի Գևորգի Վարդանյանը, իսկ հոգեբաններից՝ Սյուզաննա Արթուրի Դանելյանը:
- «Հովնանյան հիմնադրամը» աշխատակազմի և ուսանողների համար հայտարարում է մրցույթ: Պայմանավորվածություն կա կարիերայի կենտրոնի հետ փետրվարի 19-ին հանդիպում կազմակերպել և մանրամասն ծանոթանալ մրցույթի պայմաններին:

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

Նիստի քարտուղար՝ Վ.Պապոյան